

պատմական ու աշխարհագրական յարաբերութիւններ, այլ, աւելի շուտ, մեր ընդհանուր անցեալից բխող ազգակցական կապեր: Եւ հէնց այդ պատճառով կովկասեան և թիւրքական ժողովուրդները այժմ կազմւած են միևնոյն կրօններից ու միևնոյն ազգերից և ունեն գրեթէ միևնոյն պատմութիւնը: Ոգևորւած այս զգացմունքներով՝ ես մաղթում եմ բախտաւոր վախճան մեր խորհրդակցութիւնների համար և յայտարարում առաջին ընդհանուր ժողովը բացւած»:

Այս, արեւելեան շողջորթութեամբ համեմաւած, ճոռոմ ու մանւածապատ, բայց յստակ մտքեր պարունակող ճառին անդրի. պատուիրակութեան նախագահը պատասխանեց ընդհանուր, խուսափողական խօսքերով: Այնուհետև Ռէուֆ բէյը դիմեց աւելի կտրուկ միջոցի: Նա դրեց Անդր. պատուիրակութեան առջեւ հետեւեալ հարցումը. «Օսմանեան պատուիրակութիւնը խնդրում է անդրկովկասեան պատուիրակութեան անել ստոյգ յայտարարութիւններ յիշեալ հանրապետութեան էութեան, ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպութեան մասին և հարցնում է, թէ արդեօք վերջինս կատարե՞լ է այն պայմանները, որոնք պահանջոււմ են միջազգային իրաւունքով պետութիւն կազմելու համար»:

Այս հարցումին անդրկովկասեան պատուիրակութիւնը պատասխանեց, յայտնելով, մարտ 2-ի նիստին, թէ՛ «Անդրկովկասի էութեան, կառավարութեան ձևի, քաղաքական և վարչական կազմակերպութեան հարցը հերթի է դրւած այդ հարցերը լուծելու միակ իրաւագոր մարմնի՝ Անդրի. Մէյմի մէջ, որը ստեղծւած է ժողովուրդների ազատ կամարտայայտութեամբ և ընդհանուր ընտրական իրաւունքի սկզբունքով: Բոլշեւիկեան յեղաշրջումից սկսած Անդրկովկասի հողի վրա դատարեց կենտրոնական ուսակական իշխանութեան գործունէութիւնը, և մի նոր, իքնուրոյն կառավարութիւն ծաղեց, որը այժմ պատասխանատու է Մէյմի առջև: Անդրկովկասի այս կառավարութիւնը մտել է միջազգային յարաբերութիւնների շրջանը՝ ընդունելով օսմանեան կառավարութեան առաջարկը՝ սկսելու իր հետ ինքնուրոյն բանակցութիւններ հաշտութիւն կնքելու նպատակով: Յետագային, Մէյմի ու Անդրի. կառավարութիւնը այս ուղղութեամբ արին մի նոր քայլ ևս՝ ուղարկելով պատերազմող պետութիւնների արտաքին գործոց նախարարներին հեռագրական բողոք Բրեստ-Լիտուսկի դաշնագրի Անդրկովկասին վերաբերող մասի դէմ և յայտարարելով, որ առանց իրենց գիտութեան և հաւանութեան կնքւած դաշնագիրը միջազգային իրաւունքի տեսակէտից զուրկ է որևէ արժէքից և պարտագիր չէ իրենց համար: Սակայն, այս խաղաղութեան խորհրդածողովը Տրապիզոնում նոյնպէս հանդիսանում է միջազգային-իրաւական կեանքի մի ակտ: Այսպիսով, Անդրկովկասը de facto՝ իրապէս արդէն պետութիւն է, թէև դեռ չի յայտարարել ու չի տեղեկագրել պետութիւններին իր անկախութիւնը»:

Այս պատասխանի մէջ էլ որոշութիւն չկար. թիւրքերը ձգտում էին ստանալ յստակ պատասխան, թէ Անդրկովկասը անկախ պետութիւն է. անդրկովկասցիք այդ պատասխանը չէին տալիս: Այդ պատճառով Ռէուֆ բէյը սկսեց Անդր. պատուիրակութեան դնել մի շարք հարցումներ վերջինիս պատասխանի գանազան կէտերի մասին և երբ միւս օրւայ, մարտ 3-ի նիստում ստացաւ պատասխանները, արաւ հետեւեալ յայտարարութիւնը. «Օսմանեան կայսերական պատուիրակութիւնը, անդրկովկասեան պատուիրակութեան նախագահի արած յայտարարութիւններին ծանօթանալուց յետոյ,